ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ

<< ԹԻՎ 5 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ>> ՓԲԸ

ք. Երևան, Նորք, Հովսեփյան 8 հեռ.65 14 70

02-84 16.03.2015թ.

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/16» ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով
գնում կատարելու ընթացակարգի հնարավոր
մասնակիցների ղեկավարներին
Հարգելի մասնակից

ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/16 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում <<Թիվ 5 պոլիկլինիկա>> ՓԲԸ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանքներ:

Սույն հրավերի(ծանուցման) ծածկագիր է հանդիսանում «ԹՀՊ-15/5-ՇՀԱՊՁԲ-11/16»:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ք. Երևան Գ.Հովսեփյան 8, տնօրենի ընդունարան հասցեով, մինչև 2015թ. մարտի 26-ը, ժամը 10:30-ն: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար է.Գրիգորյանը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն <<Թիվ 5 պոլիկլինիկա>> ՓԲԸ-ն շենքում ք. Երևան Գ.Հովսեփյան 8 տնօրենի ընդունարան-հասցեով, 2015թ. մարտի 26-ին, ժամը 10:30-ն:

Գնման առարկա է հանդիսանում << Թիվ 5 պոլիկլինիկա >> ՓԲԸ կարիքների համար՝ բժշկական պարագաների, գործիքների և սարքավորումների ձեռքբերումը:

<<Թիվ 5 պոլիկլինիկա>> ՓԲԸ ի կարիքների համար՝ բժշկական պարագաների, գործիքների եւ սարքավորումների մատակարարման (որոնք կազմված են՝ 9 չափաբաժիններից) տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը ներկայացված են կից ներկայացված պայմանագրի նախագծի N 1 հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված N5), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկ (Հավելված N 5.1): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/16 ընթացակարգի հրավերով սահմանված կարգով: